



Տեղական  
Ժողովրդավարության  
Դպրոց

# ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Տեղական ժողովրդավարության դպրոցի  
կազմակերպման

ԵՐԵՎԱՆ

2019

## Բովանդակություն

Նախաբան.....	2
ՏԺԴ-ի ստեղծման նախադրյալները .....	2
ՏԺԴ-ի ստեղծման անհրաժեշտությունը.....	3
ՏԺԴ-ի նպատակներն ու խնդիրները.....	5
ՏԺԴ-ից ակնկալվող արդյունքները.....	6
ՏԺԴ-ի թիրախային խմբերը.....	7
ՏԺԴ-ի կազմակերպման գործընթացը (ընթացակարգը) .....	8
<i>Փուլ 1. ՏԺԴ-ի մասնակիցների բազային խմբի ձևավորում.....</i>	<i>10</i>
<i>Փուլ 2. Ընդհանուր ճանաչողական միջոցառման-սեմինարի կազմակերպում և         իրականացում.....</i>	<i>11</i>
<i>Փուլ 3. «Ուսուցում տեղական կազմակերպիչների համար» սեմինարի         կազմակերպում և անցկացում .....</i>	<i>13</i>
<i>Փուլ 4. Տարածքային սեմինարների կազմակերպում և անցկացում .....</i>	<i>14</i>
ՏԺԴ-ի գործունեության ձևաչափերը .....	16
<i>Ոչ ստացիոնար դպրոցի գաղափարը և իրականացման եղանակները .....</i>	<i>16</i>
ՏԺԴ-ի ուսուցման և գործունեության կենսունակության ապահովման եղանակները.....	17
ՏԺԴ-ի ուսուցման մեթոդաբանությունը .....	19

## Նախաբան

Սույն մեթոդաբանությունը նկարագրում է «**Տեղական ժողովրդավարության դպրոց**»-ի (ՏԺԴ-ի) հիմնման նախադրյալները, հիմնավորումը, նպատակները, խնդիրները, շահառուների թիրախային խմբերը, կազմակերպման մեթոդները և գործունեության արդյունքների գնահատման եղանակները:

ՏԺԴ-ի հիմնման գործընթացը իրականացվում է ԱՄՆ ՄԶԳ «ՀամաՏեղ» ծրագրի շրջանակներում երեք կազմակերպությունների՝ «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ-ի (ՀՖՄ), «Եվրասիա համագործակցություն հիմնադրամի» (ԵՀՀ) և «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» ՀԿ-ի (ՏՀԶՎԿ)-ի, համընկերության (կոնսորցիումի) կողմից:

## ՏԺԴ-ի ստեղծման նախադրյալները

Երկրում տեղի ունեցող ժողովրդավարական բարեփոխումները առաջացնում են համապատասխան կարողություններ, գիտելիքներ ու հմտություններ ունեցող կադրային ռեսուրսների անհրաժեշտություն: Հայաստանի պատմության արդի փուլում անհրաժեշտ են նոր մտածողությամբ և ձգտումներով երիտասարդ կադրեր, ովքեր ունակ և պատրաստ են ստանձնել պատասխանատվություն երկրի քաղաքական, սոցիալ-տնտեսական և հասարակական կյանքի առավել արդյունավետ կառավարման համար:

Այդ կարիքը հատկապես սուր է արտահայտված ՀՀ մարզերի փոքր ու միջին քաղաքներում ու գյուղերում, որտեղ նոր տիպի գիտելիքների և կարողությունների համարյա իսպառ բացակայությունը բերում է տնտեսական, ձեռնարկատիրական, քաղաքական ու ժողովրդավարական գործընթացների դանդաղ ընթացքի կամ ընդհանրապես առաջընթացի բացակայության:

Ներկայումս Հայաստանում, մեծ քաղաքներից դուրս, երիտասարդությունը բավարար չափով ներգրավված չէ հանրային կառավարման տարբեր գործընթացներում: Մասնավորապես, համայնքներում երիտասարդներից քչերն են հանդիսանում ՏԻՄ-երի անդամ, համայնքապետարանի աշխատակից, կամ էլ պարզապես համայնքի ակտիվ բնակիչ: Դրա հետևանքները իրենց զգացնել տվեցին հատկապես վերջին քաղաքական իրադարձությունների ժամանակ: Համապատասխան ավյունի ու եռանդի, ժողովրդավարական ճիրքի, ունակությունների և գիտելիքների տեր երիտասարդ մարդկանց խիստ պակասի պատճառով, փոքր ու միջին համայնքները թույլ մասնակցություն ունեցան երկրում կատարվող քաղաքական իրադարձություններին:

Երիտասարդները, ապրելով փոքր ու միջին համայնքներում, մինչև այժմ հնարավորություն չեն ունեցել մոտիկից շփվելու ժողովրդավարական առաջավոր փորձի, գաղափարների և արժեքների հետ: Նախկինում սոցիալական արդարության և պետության նկատմամբ վստահության պակասի պատճառով երիտասարդների մոտ

առաջացել է նաև որոշակի ապատիայի զգացում (հոգեբանական ճնշվածություն, անտարբերություն, հիասթափություն, հուսախաբություն և այլն), նրանք ցանկություն կամ մոտիվացիա չունեն զարգանալու, մտածելու իրենց համայնքի վաղվա օրվա մասին, ներգրավվելու ՏԻՄ-երի որոշումների կայացման մեջ, առավել ևս՝ դառնալու տեղական լիդերներ կամ էլ ակտիվ մասնակցություն ունենալու համայնքի կառավարմանն ու զարգացմանը: Նրանք չեն ձգտում մասնակցել տեղական ընտրություններին, առաջադրվել համայնքի ավագանու անդամի կամ համայնքի ղեկավարի պաշտոնների համար, ընդգրկվել համայնքի աշխատակազմում, համայնքային կազմակերպություններում կամ էլ մասնակցել քաղաքացիական նախաձեռնություններին՝ մշակելու դրամաշնորհային ծրագրեր և դիմելու ներդրումներ կատարող տարբեր կառույցների, իրենց համայնքում ինչ-որ բան դեպի լավը փոխելու նպատակով:

### **ՏԺԴ-ի ստեղծման անհրաժեշտությունը**

Այս նոր ունակությունների ձևավորման անհրաժեշտությունը հատկապես կարևորվելու է երկրի հասարակական, տնտեսական և քաղաքական զարգացման գործընթացների առաջիկա քայլերում: Համայնքներին անհրաժեշտ են նոր տիպի մտածողությամբ և ունակություններով երիտասարդ առաջնորդներ ու աջակիցներ, **ովքեր պատրաստակամ են մասնակից դառնալ համայնքային գործընթացներին և պատասխանատվություն ստանձնել իրենց համայնքների զարգացման համար:**

Ենթադրվում է, որ հենց այս երիտասարդներն էլ կդառնան ապագայի համայնքների կենսունակության ապահովման և զարգացման շարժիչ ուժը: Ապագայի ՏԻ մարմինները պետք են լինեն ուժեղ, դինամիկ և ճկուն կառույցներ, որոնք կսահմանեն համայնքի զարգացման ռազմավարական նպատակներ և կհամախմբեն բնակիչներին համայնքի խնդիրների աստիճանական լուծման շուրջ:

Նոր տիպի համայնքապետարանները պետք է դառնան այնպիսի մարմիններ, որտեղ շարունակական ուսուցումը և վերապատրաստումը կլինի կարևորագույն գործոն արդյունավետ աշխատանքի համար: Տեղական ինքնակառավարման մարմինները (ՏԻՄ-երը) պետք է կարողանան կազմակերպել համայնքի կառավարումն այնպես, որպեսզի էականորեն նպաստեն բնակչության միգրացիայի ու շրջակա միջավայրին հասցվող վնասի կանխարգելմանը և համայնքի տնտեսական անշեղ աճին:

Մեր դիտարկումներով, անհրաժեշտ փոփոխությունների շարքում առաջնային տեղ է զբաղեցնում նոր տիպի համայնքային երիտասարդության ձևավորումը: Այդպիսի երիտասարդ կադրերի կարևորագույն ունակությունների թվում են՝

- հանրային կառավարման, մասնավորապես՝ տեղական ինքնակառավարման համակարգի մասին հստակ պատկերացումը (սկզբունքները, նպատակները, կառուցվածքը, լիազորությունները, զարգացումները և այլն),
- համայնքի հեռանկարային զարգացման մեծ պատկերը, տեսլականը տեսնելու (visioning) ունակությունը,
- արտաքին աշխարհի հետ նպատակային և հստակ հաղորդակցվելու (communication) հմտությունը,
- համախոհների, գործընկերների բացահայտումը և նրանց առաջնորդելու ունակությունը,
- առկա ռեսուրսները գնահատելու, ծրագրային գործունեություն կազմակերպելու, իրատեսական քայլեր ձեռնարկելու և ծրագրածը իրագործելու ունակությունները,
- համայնքային շահերի պաշտպանությունը,
- նոր տեխնոլոգիաների և նորարական լուծումների կիրառումը կամ օգտագործումը,
- գործընկերային և թիմային աշխատանքի ունակությունները,
- հետազոտական, վերլուծական, մոնիթորինգի և գնահատման աշխատանքների կատարման ունակությունները:

Վերը նշված բոլոր ունակությունների ձեռքբերման անհրաժեշտությունը հուշում է համապատասխան ինստիտուցիոնալ կառույց ստեղծելու գաղափարը: Այն հնարավորություն կտա համայնքի երիտասարդներին կրթել և հաղորդել այնպիսի կարողություններ, գիտելիքներ և հմտություններ, որոնք նրանց կխրախուսեն ապագայում գործունեություն ծավալել հետևյալ ուղղություններով՝

- դառնալ համայնքի ավագանու անդամ կամ համայնքապետ,
- համայնքի աշխատակազմի կամ համայնքային կազմակերպության աշխատակից,
- բարձրաձայնել իրենց համայնքի խնդիրները, փորձել գտնել դրանց լուծման այլընտրանքային տարբերակները,
- նախաձեռնել և ծրագրել համայնքի զարգացման նոր գերակայություններ,
- զբաղվել ՏԻՄ-երի գործունեության մոնիթորինգի և գնահատման աշխատանքներով,
- վերահսկել ՏԻՄ-երի կատարած աշխատանքների և համայնքային ծառայությունների որակը և արդյունավետությունը,
- դիմել պետությանը և դոնոր կազմակերպություններին՝ համայնքում ներգրավելու դրամաշնորհային ծրագրեր,
- զբաղվել ջատագովությամբ՝ բարձրացրած խնդիրները համայնքային կամ պետական մակարդակներում լուծելու համար և այլն:

Բոլոր այս աշխատանքների հետևողական կատարումը նպատակաուղղված է համայնքի կառավարումն ու զարգացումը որակական նոր մակարդակի բարձրացնելուն:

## **ՏԺԴ-ի նպատակներն ու խնդիրները**

ՏԺ դպրոցի հիմնական նպատակն է բացահայտել նոր մտածելակերպով շահագրգիռ ու եռանդուն երիտասարդ կադրերի, տրամադրել նրանց ժամանակակից գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ, օգնել նրանց դառնալու նոր տիպի տեղական առաջնորդներ և ապագայում ստանձնելու առանցքային դերակատարություն տեղական ինքնակառավարման (ինչպես նաև՝ որոշակիորեն հանրային կառավարման) բարեփոխումների նախաձեռնման և կյանքի կոչման գործում:

Մինչ այժմ հանրային կառավարման ապակենտրոնացման գործընթացի դանդաղ ընթացքը պայմանավորված է եղել նաև այն հանգամանքով, որ տեղերում դեռևս չի ստեղծվել տեղական ժողովրդավարության կրող համապատասխան ներուժ: Այդ իսկ պատճառով, ակնկալվում է, որ ՏԺԴ-ի կողմից երիտասարդ կադրերի բացահայտումը, կրթումը և պատրաստումը մեծապես կնպաստի այդպիսի ներուժի ստեղծմանը և աստիճանական զարգացմանը:

ՏԺԴ-ի հիմնման հիմնական խնդիրներից է ՏԺԴ-ի շրջանավարտների կադրային բանկի ձևավորումը, ովքեր ունակ և պատրաստակամ կլինեն՝

1. Ընդգրկվել համայնքի կամ համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակազմերում:
2. Հանդես գալ որպես նախաձեռնող լիդերներ (առաջնորդներ)՝ կարողանալով ներագրել ՏԻՄ-երի որոշումների վրա, մշակել համայնքի զարգացման ծրագրերի նախագծեր, զբաղվել դրանց ֆոնդահայթայթմամբ, պատասխանատվություն կրել և ձեռնամուխ լինել այդ ծրագրերի իրականացմանը, մոնիթորինգին և գնահատմանը, և, այդ ամենով հանդերձ, բարելավել համայնքի բնակիչների կյանքի որակը:
3. Վերհանել ՏԻ ոլորտի համակարգային հիմնախնդիրները և հանդես գալ դրանց լուծման համար անհրաժեշտ իրավական դաշտի կատարելագործման և բարեփոխումների իրականացման նախաձեռնություններով, դրանց ընթացքի և արդյունքների հանրայնացմամբ, շահերի պաշտպանությամբ (ջատագրվությամբ, լրբինգով):

ՏԺԴ-ի մասնակիցները հնարավորություն կունենան, ուսուցման դասընթացների ժամանակ ստացած գիտելիքների և հմտությունների շնորհիվ, դասընթացի վերջում մշակել դրամաշնորհային ծրագրային հայտ-առաջարկներ և կազմակերպիչների կողմից խրախուսվել որոշակի չափի դրամաշնորհներով: Ընդ որում, այդ ծրագրային հայտերը

պետք է ՏԺԴ-ի գաղափարախոսության ավելի լայն տարածման և երիտասարդների խթանման նպատակ հետապնդեն:

ՏԺԴ-ի այն շրջանավարտները, ովքեր ցանկություն կունենան աշխատել համայնքի աշխատակազմում կամ նրա ենթակայության կազմակերպություններում, ՏԺԴ-ն նրանց համար հնարավորություն կստեղծի՝ անցնելու համապատասխան աշխատանքային փորձառություն (ինթերնշիփ) իրենց կամ այլ համայնքում, պետական կազմակերպություններում ու գերատեսչություններում: Շրջանավարտները հնարավորություն կունենան իրական աշխատանքային միջավայրում ձեռք բերել աշխատանքային փորձ և սովորել համայնքի կառավարման և զարգացման համար այնպիսի կարևոր գիտելիքներ ու հմտություններ, ինչպիսիք են հանրային բնույթի ծառայությունների մատուցումը, ՏԻ-անը բնակիչների մասնակցության ապահովումը, համայնքի ծրագրային և ֆինանսական կառավարումը և այլն:

### **ՏԺԴ-ից ակնկալվող արդյունքները**

**Անհատական մակարդակում**, ՏԺԴ-ում կրթված երիտասարդների տեղեկացված լինելը, ներգրավվածությունն ու մասնակցությունը համայնքի կառավարմանն ու զարգացմանը կօգնեն նրանց առաջիկայում կատարել ճիշտ ընտրություններ իրենց կյանքի հետագա գործողություններում՝ ձեռք բերելով անհատի կարևորության զգացողություն և կենսագործունեության ազատություն:

**Հասարակական մակարդակում**, երիտասարդները ձեռք կբերեն կապեր ու ծանոթություններ ակտիվ այլ երիտասարդների հետ, ստեղծելով ծանոթությունների և համախոհների ավելի մեծ ցանց, ինչը նրանց հնարավորություն կտա օգտվել նաև այլոց փորձից ու գիտելիքներից:

Մեծ հաշվով, **համակարգային, ինստիտուցիոնալ մակարդակում**, երիտասարդների անհատական ակտիվությունը («ձնագնդիկի» էֆեկտով) կվերաձվի ավելի մեծ հասարակական ակտիվության ու հնչեղության, նրանք կբարձրաձայնեն ու կարտահայտեն երիտասարդների համընդհանուր կարիքներն ու խնդիրները և միտված կլինեն համայնքում ստեղծելու տեղական ինքնակառավարման ավելի նպատակային, արդյունավետ և նորարարական եղանակներ, միջավայր և գործիքավորում:

Այս բոլորը միասին վերցրած կնպաստեն երիտասարդների համար աշխատատեղեր, պայմաններ ստեղծելուն, նրանց միգրացիան կանխելուն և, ամենակարևորը՝ համայնքը և երկիրը ավելի ժողովրդավար ու քաղաքացիամետ դարձնելուն:

## ՏԺԴ-ի թիրախային խմբերը

ՏԺԴ-ն իր գործունեության ընթացքում կրթելու և պատրաստելու է 18-35 տարեկան երիտասարդների մի քանի թիրախային խմբեր: Ստորև բերվում են այդ թիրախային խմբերի նկարագրությունները:

- (1) Ուսանողներ, նոր շրջանավարտ կադրեր,** ովքեր մոտ ապագայում մտնելու են կամ նոր են մտել ինքնուրույն կյանք: Այս խմբին պատկանում են բոլոր այն երիտասարդները, ովքեր նոր են ավարտում կամ արդեն ավարտել են միջնակարգ, միջին մասնագիտական կամ բարձրագույն կրթությունը և կանգնած են իրենց ապագա գործունեության հնարավորությունների սահմանափակ ընտրության խնդրի առաջ: Ներկայիս իրականությունը նրանց չի առաջարկում աշխատատեղի կամ զբաղմունքի բավարար հնարավորություններ, և այս խումբն իր ապագայի կառուցման հեռանկարը շատ հաճախ կապում է երկրից արտագաղթի հետ: Միևնույն ժամանակ, այս խմբի երիտասարդներն ունեն իրենց երկրում մնալու և այստեղ գործունեություն ծավալելու ցանկություն և նպատակադրում: Իրատեսական հեռանկար տեսնելու դեպքում, այս խմբի ներկայացուցիչները սիրով կմնան ու կաշխատեն հայրենիքում: Այս խմբի հետ աշխատանքը հուսադրող է այն առումով, որ նոր սերունդն ամբողջությամբ «թվային» է, այսինքն այն առաջին սերունդն է, որը ծնվել ու մեծացել է համակարգիչների, համացանցի, բջջային սարքերի, բարձր տեխնոլոգիաների բումի պայմաններում: Այս խմբի ներկայացուցիչը փոքր տարիքից բնական է համարում տեղեկատվության հասանելիությունն ու դրա փոխանակման արագությունը, որը տալիս է աշխատանքի նոր հնարավորություններ, մասնավորապես, իրենց հետ նմանատիպ խնդիրներ ունեցող այլ երիտասարդների հետ գործընկերության, համատեղ աշխատանքի ու փորձի փոխանակման հնարավորություններ:
- (2) Համայնքների գործող ՏԻՄ-երում, աշխատակազմերում կամ ենթակառույցներում աշխատող, կամ քաղաքացիական նախաձեռնություններում որոշակի մասնակցություն ցուցաբերած ակտիվ երիտասարդներ,** ովքեր ցանկանում են վերապատրաստվել, սովորել կառավարման նոր ժամանակակից մեթոդներ: Այս խմբի ներկայացուցիչներն արդեն ունեն համայնքում աշխատելու կամ գործելու որոշակի փորձ, գիտելիք և հմտություն, սակայն կաշկանդված են տեղի սահմանափակ հնարավորություններով: Նոր ունակությունների ձեռքբերումը այս խմբի ներկայացուցիչների կողմից կդիտվի կարևոր նվաճում, մրցակցային առավելություն, ինչպես նաև խթանիչ ազդակ, որ իրենք մենակ չեն, իրենց մասին մտածողներ կան: Սա կստեղծի երիտասարդական բազմաբնույթ



գործընթացներում ներգրավված լինելու և համատեղ գործելու հզոր էներգետիկ լիցք համայնքներում:

- (3) **Երիտասարդներ, ուլքեր երբևիցե ինքնուրույն չէին ձեռնարկի որևէ տեսակի գործունեություն:** Սակայն, նրանց ուղղորդելու, քաջալերելու, ճիշտ ճանապարհ ցույց տալու դեպքում, նրանց մոտ բնական ցանկությունն ու ձգտում կառաջանա ընդգրկված լինելու համայնքային գործընթացներում, մասնակցելու իրենցից ավելի ակտիվ ու գործունյա երիտասարդների նախաձեռնած ծրագրերում ու միջոցառումներում:

### **ՏԺԴ-ի կազմակերպման գործընթացը (ընթացակարգը)**

ՏԺԴ-ն «ՀաՄաՏեղ» ծրագրի շրջանակներում աշխատելու է 850-ից ավելի երիտասարդների հետ Հայաստանի բոլոր համայնքներում<sup>1</sup>: Այս աշխատանքը ներառելու է մի քանի փուլ, որոնց ընդհանուր տևողությունը կազմելու է մոտ 18 ամիս:

ՏԺԴ-ի ստեղծման և իրականացման ընթացքը կլուսաբանվի զանգվածային լրատվության միջոցներով (ՋԼՄ-ներով)<sup>2</sup>՝ առցանց և տպագիր: Այդ նպատակով հատուկ ստեղծված վեբ կայքի էջում (<http://celog.am/hy/trainings>) կտեղադրվեն ՏԺԴ-ի տեղեկատվական և ուսուցման նյութերը, այդ թվում՝ դասընթացների մոդուլներ, ընթերցանության նյութեր, վարժություններ, խաղեր, միջոցառումների հայտարարություններ, լուսաբանման նյութեր, հարցազրույցներ, ձայնագրություններ, և այլն: ՏԺԴ-ի մասնակիցները դրանց միջոցով հնարավորություն կունենան հետևելու ծրագրի իրականացման ընթացքին, դիտարկելու այդ նյութերը որպես ՏԺԴ-ի տեղեկատվական շտեմարան դպրոցի գործունեության ամբողջ ընթացքում:

Ինչպես վերոնշյալ կայքում, այնպես էլ այլ ՋԼՄ-ներով կտեղադրվեն նաև ՏԺԴ-ի մասնակիցների հրավիրման և ընտրության գործիքներ, որոնց կիրառմամբ էլ հնարավոր կլինի հավաքագրել և ճիշտ ընտրություն կատարել ՏԺԴ-ի դասընթացների և միջոցառումների պոտենցիալ մասնակիցների միջև:


ՏԺԴ-ի կազմակերպման փուլերը կկառուցվեն այնպիսի եղանակով, որպեսզի հետագայում հնարավոր լինի դրանք կրկնել՝ ըստ անհրաժեշտության: ՏԺԴ-ի կազմակերպական այդպիսի կառուցվածքը հնարավորություն կտա ապահովել դպրոցի կենսունակությունը և որակի շարունակական բարձրացումը:

ՏԺԴ-ի կազմակերպման սխեման ներկայացված է Գծապատկեր 1-ում:

Ստորև բերվում է ՏԺԴ-ի կազմակերպման առանձին փուլերի նկարագրությունը:

<sup>1</sup> Այստեղ և այսուհետ ամբողջ փաստաթղթում, Հայաստանի համայնքներ ասելով նկատի ենք ունենալու բոլոր համայնքները՝ բացառությամբ Երևան քաղաքի:

# Գծապատկեր 1. Տեղական ժողովրդավարության դպրոցի կազմակերպման սխեմա



## **Փուլ 1. ՏԺԴ-ի մասնակիցների բազային խմբի ձևավորում**

**ՏԺԴ-ի մասնակիցների թեկնածուների ակնկալվող հատկանիշները.** Այս խումբը ներառելու է հանրապետության ամբողջ տարածքից մրցույթին մասնակցած այն երիտասարդներին, ովքեր արդեն ունեն առաջնորդային, նախաձեռնողական և կազմակերպչական որոշակի ունակություններ և հմտություններ: Այս խմբի մասնակիցների մի զգալի մասը դառնալու է ծրագրով նախատեսված գործողությունների հիմնական կրողն ու շարժիչ ուժը: Այս խմբի մասնակիցների հետ աշխատանքը և ուսուցումը շարունակվելու են մինչև ծրագրի ավարտը և ներառելու են մի քանի փուլեր, որոնց նկարագրությունը բերվում է ստորև:

Ակնկալվում է, որ ողջ հանրապետությունից ՏԺԴ-ին մասնակցության համար կդիմեն 200-250 թեկնածուներ, որոնցից ծրագիրը կընտրի 70-75-ին: Այս խմբի մասնակիցների ընտրության համար հաշվի կառնվեն թեկնածուների հետևյալ հատկանիշները կամ չափորոշիչները.

- Կրթությունը
- Ունակությունները
- Փորձը
- Բնակության վայրը<sup>2</sup>
- Գենդերային հավասարությունը<sup>3</sup>.
- Տարիքը<sup>4</sup>:

Թեկնածուները առցանց եղանակով կգրանցվեն այդ նպատակով հատուկ ստեղծված հարթակում, որտեղ անձնական տվյալների հետ միասին նրանք կներկայացնեն նաև որոշ տեղեկություններ իրենց փորձի, գիտելիքների և հմտությունների մասին<sup>5</sup>:

**Ակնկալվող արդյունքները.** Այս փուլի ավարտին պետք է ապահովել հետևյալ հիմնական արդյունքը.

- Ըստ ՏԺԴ-ի մասնակիցների ընտրության չափորոշիչների, ընտրված մասնակիցների 70-75 հոգանոց բազային խումբ հանրապետության ամբողջ տարածքից:

Այս փուլը նախատեսվում է ավարտել մինչև 2019թ. ապրիլի 15-ը:

<sup>2</sup> Ընտրված խումբը պետք է համաչափ կերպով ներկայացնի Հայաստանի բոլոր մարզերը և դրանց բնակչության թվաքանակը

<sup>3</sup> Ծրագիրը պետք է մասնակցության հավասար հնարավորություններ ընձեռի իգական և արական սեռերի ներկայացուցիչների համար

<sup>4</sup> Խմբի մասնակիցների տարիքը պետք է լինի 18 տարեկանից ոչ պակաս և 35 տարեկանից ոչ ավելին: Սակայն, չեն բացառվում բացառություններ բացառիկ դեպքերում:

<sup>5</sup> Նախատեսվում է թեկնածուներին առաջարկել՝ գրելու մինչև 200 բառ պարունակող ստեղծագործական նյութ իրենց կարողությունների և փորձի մասին:

## **Փուլ 2. Ընդհանուր ճանաչողական միջոցառման-սեմինարի կազմակերպում և իրականացում**

ՏԺԴ-ի բազային խմբի ընտրությունից հետո, Երևանից դուրս, Հայաստանի որևէ գեղատեսիլ վայրում կկազմակերպվի մեկնարկային ճանաչողական եռօրյա միջոցառում-սեմինար: Նախատեսվում է այս միջոցառումն անցկացնել 2019թ. ապրիլի երկրորդ կեսին:

### **Միջոցառման-սեմինարի նպատակները.**

Միջոցառման սեմինարի հիմնական նպատակներն են՝

1. Մասնակիցներին ներկայացնել ՏԺԴ-ի ծրագիրը, հիմնման մեթոդաբանությունը, նպատակներն ու խնդիրները, գործունեության ձևաչափերը, ինչպես նաև նրանց տրամադրել բազային որոշ գիտելիքներ ու հմտություններ:

2. Բազային 70-75-հոգանոց մասնակիցներից ընտրել 10-20 ամենաակտիվ և ունակ կազմակերպիչների (առաջնորդների) խումբ (յուրաքանչյուր մարզից 1-2 ներկայացուցիչ), որն օգնելու և աջակցելու է «ՀամաՏեղ» ծրագրին ՀՀ մարզերում ՏԺԴ-ի տարածքային սեմինարների կազմակերպմանը և անցկացմանը:

3. Ձևավորել մասնակիցների 45-50-հոգանոց խումբ (յուրաքանչյուր մարզից 4-5-ական ներկայացուցիչներ), որոնք հետագայում կլինեն տարածքային սեմինարների մասնակիցների կորիզը:

**Միջոցառման-սեմինարի մասնակիցները.** Միջոցառման բացմանը (ՏԺԴ-ի ծրագրի շնորհանդեսին) կմասնակցեն բազային խմբի երիտասարդները, ինչպես նաև ՀՀ նախարարություններից, հասարակական կազմակերպություններից, ԶԼՄ-ներից, միջազգային կազմակերպություններից և ՏԻՄ-երից հրավիրված ներկայացուցիչներ:

**Միջոցառման-սեմինարի մասին տեղեկատվության տարածումը.** Միջոցառման-սեմինարի մասին տեղեկատվության տարածումը և բուն միջոցառման լուսաբանումն իրականացվելու է տարբեր ԶԼՄ-ներով, այդ թվում՝ ռադիո-հեռուստատալիքներով, համացանցով՝ ՏԺԴ-ի ծրագրի համար ստեղծված հատուկ կայքով, թեմատիկ կապ ունեցող այլ կայքերով, սոցիալական ցանցերի էջերով, տպագիր մամուլով և այլ միջոցներով:

**Միջոցառման-սեմինարի օրակարգի ընդհանուր նկարագիրը.** Միջոցառման առաջին օրվա օրակարգի առաջին կեսը նվիրված է լինելու ՏԺԴ-ի ծրագրի ներկայացմանը և դրա վերաբերյալ կարծիքների ու տեսակետների արտահայտմանը:

Միջոցառման-սեմինարի առաջին օրվա երկրորդ կեսին կսկսվեն ՏԺԴ-ի թեմատիկ քննարկումները բազային խմբի հետ, որոնք կշարունակվեն նաև միջոցառման-սեմինարի **երկրորդ օրը**: Թեմատիկ քննարկումները կծավալվեն ՏԻ և ՏԺ առանցքային մի քանի թեմաների շուրջ:

Այս թեմատիկ նյութերը ներկայացնելու համար դասընթացավարները կօգտագործեն մեծահասակների ուսուցման սկզբունքներով պատրաստված

ցուցադրական նյութեր, վարժություններ և խաղեր: Հատկապես մեծ տեղ կտրվի խաղային մեթոդներով ուսուցմանը՝ մասնակիցներին նախօրոք տալով տվյալ թեմային առնչվող առաջադրանքներ, բացատրելով խաղի կանոնները և խաղից սպասվող արդյունքները:

Միջոցառման-սեմինարի **երրորդ օրվա** օրակարգը նվիրված կլինի թեմատիկ եզրափակիչ քննարկումներին և վերլուծությանը (ռեֆլեքսիային), որոնց նպատակն է ստուգել, թե որքանով է մասնակիցների կողմից յուրացվել սեմինարի նախորդ օրերին ներկայացված ուսուցման նյութերը: Միջոցառման-սեմինարի ավարտին մասնակիցներին կընձեռվի հնարավորություն՝ գնահատելու ամբողջ միջոցառման որակն ու արդյունավետությունը:

Ինտերակտիվ քննարկումների միջոցով ՏԺԴ-ի ծրագրի կազմակերպիչները և դասընթացավարները կձևավորեն կարծիքներ սեմինարի բոլոր մասնակիցների ունակությունների և ծրագրի նկատմամբ նրանց հետաքրքրվածության մակարդակի վերաբերյալ: 10-20 ակտիվ երիտասարդների ընտրելիս, բացի մասնակիցների թեմատիկ և կազմակերպչական ունակություններից, հաշվի կառնվեն նաև նրանց համաչափ բաշխվածությունն՝ ըստ ՀՀ մարզերի և գենդերային հավասարության:

**Այս փուլի միջոցառման-սեմինարի կազմակերպման և անցկացման համար անհրաժեշտ է ապահովել հետևյալ նյութերը.**

- ԶԼՄ-ներին տրամադրվելիք նյութեր ՏԺԴ-ի ծրագրի ճիշտ լուսաբանման համար՝ պրես-ռիլիզների տեքստեր, հարցազրույցներ, այլ
- Միջոցառման-սեմինարի օրակարգ
- Միջոցառման-սեմինարի մասնակիցների հստակ համաձայնեցված ցուցակ
- Մշակված և քննարկված թեմատիկ ուսուցման ցուցադրանյութեր, վարժությունների, խաղերի գրավոր նկարագրություններ, ձևաչափեր
- Մասնակիցների կողմից միջոցառման-սեմինարի գնահատման հարցաթերթ:

**Ակնկալվող արդյունքները.** Այս փուլի ավարտին, ծրագրի կողմից 70-75 երիտասարդների բազային խմբից.

- Կընտրվեն մոտ 10-20 երիտասարդ՝ յուրաքանչյուր մարզից 1-2 հոգի, որոնց կազմակերպչական հատկանիշները և հետաքրքրվածությունը ծրագրի նկատմամբ հստակորեն կբացահայտվեն եռօրյա միջոցառման-սեմինարի ընթացքում (այսուհետ՝ տեղական կազմակերպիչների թիմ),
- Կընտրվեն մոտ 45-50 երիտասարդ, որոնք, թերևս, մի փոքր ավելի պակաս, քան վերը նշվածները, նույնպես ունեն ծրագրի հետագա գործողություններին մասնակցելու որոշակի ունակություններ և ցանկություն: Նրանք կազմելու են տարածքային սեմինարների մասնակիցների կորիզը:

Այս փուլի արդյունքների ամփոփումը նախատեսվում է ավարտել մինչև 2019թ. մայիսի 1-ը:

### **Փուլ 3. «Ուսուցում տեղական կազմակերպիչների համար» սեմինարի կազմակերպում և անցկացում**

Այս փուլում կիրականացվի տեղական կազմակերպիչների 10-20 հոգանոց խմբի հետագա խորացված ուսուցում նրանց կազմակերպչական ունակությունները զարգացնելու, տեղերում իրականացվող գործողությունները կանոնակարգելու և իրականացնելու համար:

Փուլի հիմնական նպատակն է տեղերում ունենալ ծրագրի պատրաստված ներկայացուցիչներ, ովքեր հետագայում կստանձնեն ամենատարբեր դերակատարումներ: Նրանք կօգնեն ՏԺԴ-ի գործունեության կազմակերպմանը իրենց տարածքում, ՏԺԴ-ի ծրագրային թիմին անցկացնել տարածքային սեմինարները՝ օգնելով դասավանդողներին և ձեռքբերելով ուսուցման կազմակերպման փորձ: Այս խմբի անդամները ծրագրի կողմից կխրախուսվեն խորհրդանշական հոնորարներով տարածքային սեմինարների կազմակերպմանը և անցկացմանը մասնակցելու համար:

Տեղական կազմակերպիչների ուսուցումը նախատեսվում է 2-3-օրյա: Մասնակիցների կողմից ուսուցման նյութերի յուրացման աստիճանը պարզելու համար կկիրառվեն թեստեր և/կամ հարցազրույցներ: Մասնակիցները կստանան ուսուցման ավարտական վկայականներ:

**Այս փուլի ուսուցման իրականացման համար անհրաժեշտ է ապահովել հետևյալ նյութերը.**

- Ուսուցման նյութեր՝ դասաժամաքանակով և օրակարգով
- Ուսուցման ցուցադրանյութեր
- Տեսանյութեր
- Վարժություններ, խաղեր
- Ուսուցման նյութերի թեստային հարցեր
- Հարցազրույցների հարցեր
- Այլ անհրաժեշտ նյութեր:

**Փուլի ակնկալվող արդյունքները.** Այս փուլի ավարտին յուրաքանչյուր տեղական կազմակերպիչ պետք է.

- Ունենա ՏԺԴ-ի կազմակերպման ունակություններ
- Տիրապետի ՏԺԴ-ի մեթոդաբանությանը
- Ունենա համայնքային ծրագրերի նախաձեռնման որոշակի գաղափարներ ու մոտեցումներ

- Ինքնուրույն կամ ՏԺԴ-ի աջակցությամբ կարողանա կազմակերպել ՏԺԴ-ի տարածաշրջանային սեմինարներ<sup>6</sup>:

**Տեղական կազմակերպիչների այս խումբն էլ հենց հանդիսանալու է ՏԺԴ-ի գաղափարների կրողը և կենսունակության ապահովման երաշխիքը:**

Այս փուլը նախատեսվում է ավարտել 2019թ. մայիսի վերջին:

**Փուլ 4. Տարածքային սեմինարների կազմակերպում և անցկացում**

Այս փուլում ծրագիրը կշարունակի ՏԺԴ-ի մասնակիցների ունակությունների զարգացմանն ուղղված քայլերը: «ՀամաՏեղ» ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր մարզի երիտասարդների համար կկազմակերպվի և կանցկացվի 6-օրյա խորացված տարածքային մեկ ուսուցման սեմինար:

Այս փուլի ուսուցման յուրաքանչյուր սեմինարի մասնակիցների խումբը կձևավորվի հետևյալ երեք տիպի մասնակիցներից՝

- Տեղական կազմակերպիչներ՝ 1-2 երիտասարդ, որոնց հետ ծրագիրն արդեն անցկացրել է երկու ծրագրային փուլ՝ ընդհանուր ճանաչողական միջոցառում-սեմինարը և 2-3-օրյա ուսուցման սեմինարը տեղական կազմակերպիչների խմբի համար:
- Ակտիվ երիտասարդների խումբը՝ միջին հաշվով 5 հոգի յուրաքանչյուր մարզից, որոնք արդեն մասնակցել են ՏԺԴ-ի ընդհանուր ճանաչողական միջոցառում-սեմինարին:
- Լրացուցիչ 20-25 երիտասարդ, որոնցից միջին հաշվով 4-5-ական մարդ թիմ կկազմեն՝ նախորդ կետում նշված 5 երիտասարդներից յուրաքանչյուրի հետ միասին: Արդյունավետ աշխատանքի համար, ցանկալի է, որ այս փոքր թիմերը լինեն տվյալ մարզի միևնույն տարածաշրջանից: Սակայն, տվյալ մարզի տարբեր տարածաշրջաններից թիմերի ձևավորումը նույնպես չի բացառվում:

Այսպիսով, յուրաքանչյուր տարածքային սեմինարին կմասնակցեն 25-30 մարդ: Ընդհանուր առմամբ, ՏԺԴ-ի 4-րդ փուլի թվով 9 տարածքային սեմինարներին կմասնակցեն մոտ 225-270 մարդ:

Այս փուլի մյուս խնդիրը տեղերում ապագա դրամաշնորհային ծրագրերի իրականացման համար թիմերի ձևավորումն ու այդ թիմերի կողմից ծրագրային հայտառաջարկների կազմումն ու քննարկումն է: Այս փուլի սեմինարի ընթացքում մասնակիցների թիմերը պետք է մշակեն դրամաշնորհային ծրագրերի հիմնական

<sup>6</sup> Ակնկալվում է, որ տվյալ մարզում տարածքային սեմինարի կազմակերպումից և անցկացումից հետո հետագայում ավելի նպատակահարմար կլինի կազմակերպել ՏԺԴ-ի արդեն տարածաշրջանային (խորհրդային նախկին շրջանի, բազմաբնակավայր համայնքների մակարդակում) սեմինարներ:

բաղադրիչները: Թիմերը կմշակեն այնպիսի ծրագրային հայտեր, որոնք ուղղված կլինեն ՏԺ հիմնական գաղափարների տարածմանը և կիրականացվեն իրենց համապատասխան տարածաշրջաններում: Ծրագրային հայտերը, ընդհանուր գծերով, պետք է պատրաստ լինեն սեմինարի ավարտին: Այս ծրագրերի իրականացման համար թիմերը ՏԺԴ-ի ծրագրից կստանան դրամաշնորհներ՝ 200,000 դրամից մինչև 500,000 դրամի սահմաններում:

**Այս փուլի իրականացման համար անհրաժեշտ է ապահովել հետևյալ նյութերը.**

- ՏԻ և ՏԺ վերաբերյալ ուսուցման մոդուլներ՝ ըստ առանձին թեմաների
- Ուսուցման ցուցադրանյութեր
- Տեսանյութեր
- Խաղեր, վարժություններ
- Ուսուցման մոդուլների թեստային հարցեր
- Մասնակիցների կողմից տարածքային սեմինարի գնահատման հարցաթերթ
- Այլ անհրաժեշտ նյութեր

**Փուլի ակնկալվող արդյունքները.** Այս փուլի ավարտին սեմինարների մասնակիցները պետք է.

- Տեղյակ լինեն ՏԻ-ան և ՏԺ-ի վերաբերյալ հիմնական համակարգային հարցերին
- Կարողանան հստակ շարադրել իրենց տեսակետները համայնքի կառավարման և զարգացման ուղղությունների վերաբերյալ
- Կարողանան վերհանել և վերլուծել համայնքի կառավարման և զարգացման հետ առնչվող հիմնախնդիրները և դրանց լուծման այլընտրանքային եղանակները
- Ունենան համայնքային ծրագրերի մշակման, իրականացման, մոնիթորինգի և գնահատման որոշակի գիտելիքներ և հմտություններ
- Կարողանան ձևավորված թիմերով մշակել դրամաշնորհային ծրագրի հայտ և բյուջե, զբաղվել նման ծրագրերի ֆոնդահայթայթմամբ
- Ցանկության դեպքում, առաջադրվել ՏԻՄ-երի առաջիկա ընտրություններին որպես թեկնածու, ընդգրկվել համայնքի աշխատակազմում և համայնքային կազմակերպություններում որպես աշխատող:

Այս փուլի տարածքային 4 սեմինարները նախատեսվում է ավարտել մինչև 2019թ. հոկտեմբերի 1-ը, իսկ մնացյալ տարածքային 5 սեմինարները՝ մինչև 2020թ. հոկտեմբերի 1-ը:



## **ՏԺԴ-ի գործունեության ձևաչափերը**

### **Ոչ ստացիոնար դպրոցի գաղափարը և իրականացման եղանակները**

ՏԺԴ-ի կարևոր առանձնահատկությունը և յուրօրինակությունը կայանում է նրանում, որ դպրոցն ունի ոչ ստացիոնար ցանցային բնույթ, այսինքն այն իրենից ներկայացնում է ոչ թե կոնկրետ վայր, հաստատություն կամ ֆիզիկական գույք, այլ որոշակի գաղափարների, դասավանդման ժամանակակից մեթոդների, դասապրոցեսների, դասանյութերի, դասավանդողների և մասնակիցների կենդանի շփումների, առցանց հարթակի համախմբություն: Այլ կերպ ասած՝ ՏԺԴ-ն ավելի շուտ գաղափարախոսություն է, քան հաստատություն, որի հիմնական նպատակը դրական փոփոխությունների խթան հաղորդելն է համայնքներում և երկրում:

Այսպիսով, ՏԺԴ-ի արտադրանքը (վերջնական արդյունքի իմաստով) դա, առաջին հերթին, մարդկային այնպիսի ռեսուրսների առկայությունն է, որոնք տիրապետում են որոշակի ունակությունների, գիտելիքների ու հմտությունների և հանդիսանում են առաջադեմ գաղափարների կրողներ՝ տեղական ժողովրդավարության, հանրային կառավարման, մասնավորապես՝ տեղական ինքնակառավարման բնագավառներում: Հենց այս կադրերի գոյությունն ու պատրաստվածությունն էլ հանդիսանալու են դպրոցի հաջողության գրավականը:

Երկրորդ հերթին, ՏԺԴ-ն ուսուցման այն մոտեցումներն ու եղանակներն են, որոնք թույլ կտան շարունակաբար կրթել ու պատրաստել որոշակի արժեքներ կրող երիտասարդներ, ովքեր երկրում (մասնավորապես՝ համայնքում) դրական փոփոխությունների կրողն են հանդիսանալու առաջիկայում: Սա կլինի դպրոցի կենսունակության երաշխիքը:

Եվ վերջապես, ՏԺԴ-ն դա ուսուցման այն նյութերն են, որոնք կստեղծվեն այս ծրագրի ընթացքում և այսուհետ շարունակաբար կծառայեն դպրոցի նպատակներին հասնելուն: Դրանք կներառեն կրթական ծրագրեր, ուսուցման մեթոդաբանություն, տպագիր, տեսա-ձայնային նյութեր, ուսուցման մոդուլներ, սլայդեր, վարժությունների, խաղերի շտեմարաններ, ընթերցանության նյութեր, և այլն:

Տեղերում ՏԺԴ-ի գործունեության կազմակերպման ժամանակ հնարավորինս կօգտագործվեն ԱՄՆ ՄԶԳ-ի աջակցությամբ նախկինում ՏԻ և ՏԺ ոլորտներում իրականացված ծրագրերի միջոցով ստեղծված ուսումնական կենտրոնների ռեսուրսները (որոնք տեղաբաշխված են Վանաձոր, Արմավիր, Սիսիան, Վեդի և այլ համայնքներում), ուսուցման նյութերը, մեթոդաբանությունները, փորձը և այլն:

ՏԺԴ-ի հիմնման և գործարկման գործընթացի ավարտից հետո, ծրագիրն իրականացնող կազմակերպությունները նախատեսում են ապահովել ՏԺԴ-ի կենսունակությունը՝ շարունակելով ծրագրային, մեթոդաբանական և ֆինանսական հետագա աջակցությունը ՏԺԴ-ին:

**ՏԺԴ-ի ոչ ստացիոնար առցանց բնույթը թելադրում է որոշակի նախապայմաններ դրա բարեհաջող գործունեության և կենսունակության ապահովման համար:**

Մասնավորապես, ՏԺԴ-ի ստեղծման և գործունեության ապահովման համար, «Համասեղ» ծրագրի իրականացման ժամանակահատվածում, կօգտագործվեն ծրագիրն իրականացնող երեք կազմակերպությունների աշխատակազմերի, ինչպես նաև ՀՀ մարզերում գործող ինֆոտների վարչական և փորձագիտական ռեսուրսները: Նրանք կպատրաստեն ՏԺԴ-ի ուսուցման և մեթոդաբանական բոլոր նյութերը, կիրականացնեն ՏԺԴ-ի մասնակիցների ուսուցումն՝ ըստ վերևում նկարագրված փուլերի, մշտապես կապ կապահովեն մասնակիցների հետ, կկատարեն վերջիններիս մենթորների դեր և կապահովեն ՏԺԴ-ի ծրագրային արդյունքները:

Հատուկ կարևորություն ունի նաև տեղերում ՏԺԴ-ի մասնակիցներ հայտնաբերելու, նրանց ուսուցանելու և նրանցից ՏԻ ու ՏԺ բնագավառների մասնագետներ պատրաստելու հարցերը: Դա է պատճառը, որ ՏԺԴ-ի ստեղծման հենց սկզբից, դպրոցի համար խելամտորեն ընտրված երիտասարդներն ընդգրկված կլինեն ՏԺԴ-ի կազմակերպչական և ուսուցման աշխատանքների բոլոր փուլերում՝ այդպիսով ձեռք բերելով փորձ, գիտելիքներ, հմտություններ և դպրոցի գաղափարախոսությունը կրելու ու լավագույնս ներկայացնելու ունակություններ:

Ի լրումն նշվածի, կստեղծվի ՏԺԴ-ի առցանց հարթակ, որը տեղերի երիտասարդներին հնարավորություն կտա մշտապես կապի մեջ լինել ծրագրի աշխատակիցների և միմյանց հետ, կիսվել առկա ռեսուրսներով, կազմակերպել քննարկումներ ու ֆորումներ և այլն:

## **ՏԺԴ-ի ուսուցման և գործունեության կենսունակության ապահովման եղանակները**

ՏԺԴ-ի ստեղծման և գործունեության ապահովման համար նախատեսված գործողությունների մի մասը իրականացվելու է մեկ անգամ՝ ծրագրի սկզբում, ինչպես օրինակ՝ ընդհանուր ճանաչողական միջոցառում-սեմինարը: Մյուս մասը պարբերաբար կրկնվելու և թարմացվելու է, ինչպես օրինակ՝ նոր մասնագետներ պատրաստելուն ուղղված ուսուցումը տեղերում:

**Մասնակիցների ընտրություն և ուսուցում.** Մասնակիցների առաջին խմբի ընտրությունը և ուսուցման գործընթացը մանրամասն նկարագրված է այս փաստաթղթի առաջին մասում: Ինչպես արդեն նշվել է, իր ոչ ստացիոնար առցանց բնույթի պատճառով, ՏԺԴ-ի կայացման համար կարևորագույն գործոնը մասնակիցների շարունակական բացահայտման և պատրաստման գործընթացի լավ նախապատրաստումն ու իրականացումն է:

ՏԺԴ-ի կայացման վերջնագիծը կարող է համարվել այնպիսի պայմանների առկայությունը, երբ յուրաքանչյուր ցանկացողի համար մշտապես հասանելի կլինի դպրոցի գործունեությանը մասնակից լինելու և դրա ռեսուրսներից օգտվելու հնարավորությունը: Այդպիսի հնարավորությունը երիտասարդներին թույլ կտա հաղթահարել ներկայիս ապատիան և երկրի կամ համայնքի կառավարման մեջ որևէ դերակատարում չունենալու բացասական փորձի դառը հետևանքները:

ՏԺԴ-ի մասնակիցների ուսուցման համար ստեղծված բոլոր նյութերը, մեթոդները, փորձը, ծրագրի փորձագետների կողմից ցուցաբերվող մասնագիտական օժանդակությունը կտրամադրվեն ՏԺԴ-ի տեղական ներկայացուցիչներին:

**Ֆինանսավորման աղբյուրներ.** ՏԺԴ-ի հետագա ֆինանսավորումը կարող ի իրականացվել հետևյալ աղբյուրներից.

1. ԱՄՆ ՄԶԳ-ն և դոնոր այլ կազմակերպություններ
2. ՏԻՄ-երը՝ համայնքների բյուջեներից, և պետությունը՝ պետական բյուջեից, դրամաշնորհների տեսքով
3. ՏԺԴ-ն գործարկող կազմակերպությունները իրենք կարող են զբաղվել ուսուցման ծրագրի ֆոնդահայթայթմամբ բոլոր հնարավոր աղբյուրներից, այդ թվում, բիզնես կազմակերպություններից, հեռավոր և մոտակա սփյուռքից, ազգային հիմնադրամներից և այլն:

**Երիտասարդ կադրերի գործունեության բնագավառների ու դերակատարումների հնարավորությունների բացահայտում.** Քանի որ ՏԺԴ-ի կողմից պատրաստված կադրերը ներկայացնելու են իրենց տարածքները, համայնքները՝ որպես որակապես նոր տիպի կազմակերպիչներ, ակնկալվում է, որ նրանց մի զգալի մասը ապագայում կունենա կարևոր դերակատարում հենց իրենց մարզերում, համայնքներում՝ դառնալով մարզպետարանի, համայնքների ՏԻՄ-երի, աշխատակազմերի անդամներ, դրանով իսկ զգալիորեն բարելավելով մարզում հանրային կառավարման, համայնքում տեղական ինքնակառավարման որակը:

Մասնավորապես, ՏԺԴ-ի մասնակիցները իրականացնելու են որոշակի առաքելություն իրենց իսկ համայնքներում և միջհամայնքային միավորումներում.

- դառնալու են ուսուցման կազմակերպիչներ և շարունակելու են նոր կադրեր պատրաստելու գործընթացը տվյալ մարզի տարածաշրջաններում և համայնքներում, դրանով իսկ ապահովելով ՏԺԴ-ի կենսունակությունը իրենց մարզում,
- ներգրավված են լինելու դրամաշնորհային տարաբնույթ ծրագրեր նախաձեռնելու, իրականացնելու և համայնքային կյանքում դրական փոփոխություններ մտցնելու գործընթացներում,
- անցնելու են աշխատանքային փորձառություն իրենց կամ այլ համայնքներում, դրանով ընդլայնելով իրենց մտահորիզոնն ու կապերը իրենց նման ակտիվ այլ

երիտասարդների հետ և ձեռքբերելով աշխատանքային անհրաժեշտ հմտություններ ու փորձ,

- զբաղվելու են ջատագովությամբ՝ համայնքային խնդիրները կառավարման տարբեր մակարդակներում լուծելու համար,
- և այլն:

ՏԺԴ-ի ծրագրի ավարտից հետո, հետագայում անհրաժեշտ կլինի կրկնել հետևյալ գործողությունները՝

- մարզային կտրվածքից անցում կատարել տարածաշրջանային և համայնքային կտրվածքի, և
- կրթել նոր մասնակիցների խմբերի, ապահովելով ՏԺԴ-ի ծրագրի վերջնական արդյունքը:

### **ՏԺԴ-ի ուսուցման մեթոդաբանությունը**

ՏԺԴ-ի ուսուցման մեթոդաբանությունը ներկայացվում է առանձին փաստաթղթի տեսքով և ներառում է.

- Ուսուցման թեմաների կամ մոդուլների ցանկը և համառոտ նկարագրությունները, դրանց կապը մասնակիցների ստանալիք ունակությունների հետ
- Ուսուցման մեթոդաբանության նկարագրությունն ըստ մոդուլների՝ ուսուցման նպատակները, նյութերը, դասաժամաքանակը, ակնկալվող արդյունքները, դրանց գնահատման ցուցանիշները, օգտագործվող միջոցները, ձևաչափերը, վարժությունները, գնահատման թեստերը, հարցաթերթերը և այլն
- Կազմակերպիչների և ուսուցանողների պատրաստման (ToT) նյութերը և մեթոդները
- Սեմինարների վերլուծություն և գնահատում, շտկումներ, լրամշակումներ
- Սեմինարների՝ տեղական պայմաններին հարմարեցման մեթոդներ, ձևաչափեր: